ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ 372

16 սեպտեմբերի 2021 թվականի N -Ա

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐՔԻՆ ԽՆՁՈՐԵՍԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԽՄԲԱՅԻՆ ԴԻՄՈՒՄՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով Սյունիքի մարզի Գորիս համայնքի Ներքին Խնձորեսկ բնակավայրի բնակիչների 2021 թվականի սեպտեմբերի 13-ի խմբային դիմումը՝

որոշում եմ.

1. Սյունիքի մարզի Գորիս համայնքի Ներքին Խնձորեսկ բնակավայրի բնակիչների 2021 թվականի սեպտեմբերի 13-ի խմբային դիմումում բարձրացված հարցերն ուսումնասիրելու նպատակով ստեղծել հանձնաժողով՝ հետևյալ կազմով.

Մուշեղ Կոստանդյան	-	Սյունիքի մարզպետարանի հողաշինության և հողօգտագործման բաժնի պետ (հանձնաժողովի նախագահ)
Սեյրան Ավետիսյան	-	Սյունիքի մարզպետարանի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ
Թամար Ստեփանյան	-	Սյունիքի մարզպետարանի իրավաբանական բաժնի պետ

2. Հանձնաժողովին՝ հնարավոր սեղմ ժամկետում ուսումնասիրել դիմումում բարձրացված խնդիրները և ներկայացնել տեղեկատվություն:

16.09.2021

ՄԵԼԻՔՍԵԹ ՊՈՂՈՍՅԱՆ

Подписано: POGHOSYAN MELIKSET 4108600096

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Մ. ՊՈՂՈՍՅԱՆ**

2021թ. սեպտեմբերի 16